Լրագրողի ծոցատետրից

Շուշին դեռեւս թշնամու ձեռքին էր, եւ Արցախը՝ կատարյալ շրջափակման մեջ։ Սպառվում էին ալյուրի, մյուս սննդամթերքների պաշարները։ Իրավիճակը ծանր էր հատկապես Ստեփանակերտում. շատերը ուտելու գրեթե ոչինչ չունեին։ Այդպիսի պայմաններում, սովորաբար, հաճախակի են դառնում գողության դեպքերը։ Այդ օրերին, սակայն, նման ոչ մի դեպք չգրանցվեց ոչ Ստեփանակերտում, ոչ էլ արցախյան մյուս բնակավայրերում։ Թերեւս բացառություն էր այս մեկը։

Քաղաքամերձ Քռասնի գյուղի բրիգադավարը նախօրյակին ցանած կարտոֆիլի դաշտում մարդու թարմ ոտնահետքեր նկատելով, զարմացած մոտեցավ՝ ստուգելու։ Հողը տեղ-տեղ շրջված էր։ Ակնհայտ էր, որ ինչ-որ մեկը գիշերը քանդել-հանել էր պալարները։ Բրիգադավարը չհասցրեց հայհոյել, քանի որ հաջորդ վայրկյանին աչքն ընկավ թարմ փոսի մոտ ընկած մի ծալծլված թղթի։ Վերցրեց, բացեց ու սկսեց ընթերցել դողդոջուն, վախվորած ձեռագրով շարված տողերը. «մատաղ ինիմ՝ մի երկու հափուռ (բուռ) կարտոֆիլ ըմ քանդալ, անեծք չըտաք. խոխենքս սոված ըն»...

Բրիգադավարին այլ բան չէր մնում անելու, քան կոշտ ու հսկա ափով տամկացող աչքերը սրբելը։

* * *

Վաղ առավոտ էր։ Քնից արթնանալով՝ հանկարծակիի եկա. պատուհանիս տակ թուրքերեն խոսակցություն էր հնչում։ Ակամայից մի հրեշավոր միտք թռավեց ուղեղս՝ չլինի՞ թշնամին քաղաք է խուժել։

Ընդոստ ոտքի ելա ու կպա պատուհանին։

Ներքեւում մի խումբ ռազմագերիներ, մեր ազատամարտիկների հսկողությամբ, վերանորոգում էին հրետակոծությունից ավերված կոյուղին։

* * *

Փողոցում ռազմագերիներ են աշխատում։ Վշտահար մի մայր կամացուկ մոտենում է նրանցից մեկին եւ ինչ-որ բան խոթում բուռը։

– Կեր, որդի, քաղցրավենիք է։

Գերին երախտագիտությամբ նայում է նրան։ Մի պահ իրար են հանդիպում նրանց՝ կարեկցանքի, սփոփանքի կարոտ հայացքները։ Մայրը չի դիմանում, փղձկում է. նրա որդին էլ պատանդ է...

– Լաց մի լինի, մայրիկ,– կարծես հասկանալով դիմացինի անպարփակ վիշտը կամ գուցեեւ իր մորը հիշելով, բեկբեկուն ձայնով ասում է գերին։

Երկուսով արտասվում են լուռ՝ մեկն՝ իբրեւ մայր, մյուսը՝ որդի։

Կ. Դ.